



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ք. ՏԱՐԻ ԹԻՒ 8

ՃԱՐԱՐ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ՍՊԱՋՆԱԿԱԳ ԿԱՄԱՑՈՑՆԵՐ

ԶԵՆԻԹ

ՍՊԱՋՆԱԿԱԳ ԿԱՄԱՑՈՑՆԵՐ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաշտ-Գարու, Օռոգտի-Պաք հաստատութեան գէմ, Թիւ 16

(آ. آصاوریان) شرکت صتیبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտ-Ալի հաստատութիւն 52

Հատոր 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
վիճակամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կորի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարի լագործութեամբ, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՆԱԿԱԾԱԿԱՆ
ՍԻՆԿԵՐԻ
ՄԱՍԿԵՐԻ

- | | |
|---------|--|
| ԲԵՐԾ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՒՏԱՐ | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաւեսաւորութիւն

Մասնահիշեր գաւառներու քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլուի տունը:



ՐԵԻՆԵԼՔ ՕՐԱՆ

Թերթ ազգային, գրական եւ բաղադական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գաւառներու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. եւ օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քաղաք փարա: ԱՐԵԻՆԵԼՔ հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻՆԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ եւ իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ. ԿԵՐԱԶԱՐԻ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր եւ երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բայց ի գրական, բանասիրական գրութեանքէ, որուն տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻՆԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագին պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Դարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մամուլիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՐԲԱԿԻՐ — ՂԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 8

ՇԱՐԱԹ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907



ՔԱՌՄԷՆ ՍԻՆՎԱ

Ռումանիոյ գրագէտ քաղաքիկն, որուն յուզիչ և զգայուն վեպերը աշխարհով կը կարդացուին եւ որոնք քաղցմանուած եւնչաւեն յեզուններու մէջ:

ՏԱՃԱՐՆ ՈՒ ԻՐ ՔԱՐՈԶԻԶԸ

Հայ Բողոքական ժողովուրդը մեծաւ ցըն-
ծութեամբ և օրհներգութեամբ նախորդ կի-
րակի կատարեց բացումը իր նորակառոյց Տա-
ճարին, հոյակապ աղօթատեղի մը որ առա-
ջին անգամը ըլլալով կը կանգնի Բերայի մէջ:

Աւետարանականք ի վաղուց պէտքը կը
զգային նոյն օրինակ տիպար Տաճարի մը
մայրաքաղաքիս է՛ն յարմար գեանին վրայ
բարձրացնել, և ահա այս անգամ իրենց
ընդոծին գաղափարը իրականացաւ այդ կի-
րակին, և բոլոր Բողոքական ժողովուրդը
գնաց իր առաջին սրտաբուխ աղօթքը բարձ-
րացնել առ Աստուած, և մաղթանքն վասն
արեւշատութեան առ մեր Օգոստ. Ինքնա-
կալն, Որուն Արքայական հրամանաւն ի գլուխ
եղաւ չէնքը:

Կիրակի հաղորդութիւն մը կը
դիմէր դէպի Այնալը չէչմէ, ուր կը գտնուի
եկեղեցին, աշնան քաղջ արեւ մը համակ
խինդ և հրճուանք կազդէր գոգցես ամէն ա-
նոնց սրտերուն մէջ, որոնք կուգային առա-
ջին Հայր-մերը բարձրացնելու նորաչէն Տա-
ճարին գմբէթն ի վեր:

Օրուան լրագրութիւնը օրը օրին խօսած
ըլլալով բացման հանդէսին և յարակից պա-
րագանքներուն վրայօք, չենք ուզեր կրկնու-
թիւն մը ընել այդ առթիւ, այլ սակայն կը
փափաքինք վեր առնել անստգիւտ արժանի-
քը այն օրուան մարդուն՝ Վեր. Բոօֆէսէօն
Յ. Ճէճիզեանի, որ այնքան սրտոտ գերբնա-
կան քարոզ մը խօսեցաւ պարագային յար-
մար:

Յարգելի Բոօֆէսէօնը պարզ քարոզիչ մը
չէ, ինչպէս կը հաստատեն իր քարոզներուն
ունկնդրող թէ՛ Լուսաւորչական և թէ՛ Բողո-
քական անհատներ: Այսօր Բոօֆ. Յ. Ճէճիզ-
եան մին է այն դէմքերէն՝ որոնց նմանը չատ
չին հասնիր և կարելի չէ ալ հասցնել:

Աստուծոյ Մատեանը մեկնելու կուռ կա-
րողութեան միացուցած գիտական և գեղեց-
կագիտական հմտութիւնը, այնպէս կը համե-
մէ իր քարոզները, որոնց վերջաբանին չըս-
պասէր ունկունդիւր ժողովուրդը, այլ ընդ-

հակառակը ժամեր և ժամեր լսել, օգտուիլ
և մարսել կուգէ այն անուշ դարձուածքները
որոնց իրօք Բոօֆէսէօնն է Բոօֆէսէօնը:

Զարմանալի են իր օրինակները, տեղին
յարմարցումը, որոնց մէջէն գիտութիւնը
դուրս կուգայ հաշտուիլ կրօնքին հետ, և
ի վերջոյ կրօնքը կը յաղթահարէ, կը գլէ
կանցնի և իր պատուանդանին տակ կը ջախ-
ջախէ ինչ որ մարդկային միտքի հնարքն է և
ինչ որ արուեստական:

Հռչակաւոր բեմասացը ահա, այդ զօրեղ
միտքն ու լեզուն ունի, ան միայն գիտէ իր
հօտը հմայել լեզուին անուշ սրինգով, ուրկէ
դուրս եկող մեղեդին գոգցես կը թմրեցնէ
և ամէնուն սրտին մէջ կը քանդակէ Աստու-
ծոյ գոյութիւնը, Անոր զօրութիւնն ու փառքը:

Կիրակի, Բերայի նորաչէն եկեղեցւոյն մէջ
խօսած իր գեղեցիկ աւուր-պատշաճի մէկ
քարոզը՝ այսօր բերնէ բերան կը խօսուի, քա-
րոզ մը այնքան անուշ և այնքան գեղեց-
կօրէն հիւսուած՝ որուն ունկնդրող հարիւրա-
ւոր հրաւիրեալներ, անգամ մ'ալ ծափահա-
րեցին Վերապատ. Ճէճիզեանի կարողութիւնը
և հուշակը:

Ո՛ւր են հետեւորդները, ո՛ւր պէտք է
գտնել զանոնք, և ո՛ր դպրոցը արդեօք պի-
տի կրնայ հասցնել Ճէճիզեաններ...:

Այսօր մենք Լուսաւորչականներս կը պար-
ծենանք մեր Ամեն. Սրբազան Պատրիարքով,
իբր մէկ հատիկ Աստուածաբան, զի Ա՛ն ու-
նինք և որուն կարողութիւնը ամէն գովեստէ
վեր է արդարեւ, և ահա Բողոքական ժո-
ղովուրդն ալ ունի իր Բեմասաց քարոզիչը,
յանձին Բոօֆ. Ճէճիզեանի Գիտնանք անոնց
յարգն ու արժանիքը, զանոնք ստեպ լսել
սիրենք և օգտուիլ անոնցմէ, ապրին անոնք,
որոնք զԱստուած մը կը փառաբանեն, Աս-
տուած մը կը ջանան բնակեցնել մեր մէջ և
դնել մեր ներսիդին Անոր վախը...:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Բ Օ Թ

Նրանի անոնց՝ որոնք բարի կը ծնին, բարի կ'ապրին եւ յետ մահու բարի համբաւ մը կը ձգեն իրենց ետին :

Այսպիսի կին մ'եր՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ Դ ՍԷԹԵԱՆ

ՄԱՅՐ ԾԱՆՈԹ ՎԱՃԱՌԱԿԱՆ

ԱԶՆ. ՄԻՀՐԱՆ ԷՖԷՆՏԻ ՍԷԹԵԱՆԻ

Սեթեան բարեհամբաւ գերդաստանը դժբաղդութիւնը ունեցաւ անցեալ շաբթու կորսնցնելու իր այնքան սիրելի նահապետունին՝ Տիկին Մարիամ Սեթեան, որուն հովանի թելերուն տակ ամբողջ ընտանիքը ապաստանած, զուգուրանօք կը պատե-
սէր, կը սիրէր, կը յարգէր իբրեւ վեմը Սեթեան գերդաստանին :

Տիկին Մարիամ մին եր այն հազուագիւտ տանջիկաներէն՝ որոնց իտեալն է բա-
րիքը, աղփասասիրութիւնը եւ Կրօնքը : Ինքը որչափ ընտանեւոր մեծ մայր, նոյնքան փարած իր Աստուծոյն եւ եկեղեցիին երբեք չէր զլանար հասցնելէ իր արտաբուռի
նկարական թէ բարոյական օգնութիւններն ամեն անոնց՝ որոնք իրեն կը դիմէին :

Իբր տպար եւ օրինակելի մայր, այսօր հանգիստ է իր դամբանին մէջ, զի
յի ու յի վարձատրուած է ինք նախախնամութենէն, հասցուցած ըլլալով՝ Ազն.
Միհրան ԷՖ. Սեթեանի պէս բանիբուն եւ ամենուրեք յարգուած անձնաւորութիւն մը :

Հանգուցեալ Տիկնոջ Տան-կարգը կատարուեցաւ Կիրակի Գրնայրի
Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ, լուսազարդ Տաճարը գրեթէ կը հեծէր յուղարկա-
ւորներու խումուն եւ հաւքնիւր բազմութեամբ մը, եկեղեցական արարողու-
թեանց կը նախագահէր Տ. Վահան Ծ. Վրդ. Տեր-Միհնատեան, իր շուրջը ունենա-
լով քահանաներ եւ դպիրներ, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ արարողութիւնները
աւարտելէ վերջ, Մախսուսէի Շահին շոգեմալը՝ որ յատկապէս վարձուած էր,
դազաղը եւ յուղարկաւորները փոխադրեց Գասը-գիւղ, որուն նաւամասոյցէն
պատկառելի թափօրը կազմուելով՝ առաջնորդուեցաւ Ս. Թագաւոր եկեղեցին,
եւ հոն Տիմուր հանդիսին նախագահութիւնը ստանձնած էր Տ. Գեորգ Ա. Նպիսկ.
Երեցեան, շուրջը ունենալով՝ երկու Նպիսկոպոսներ, Վարդապետներ եւ բազ-
մաթիւ քահանաներ : Եկեղեցական արարողութիւններէն վերջ՝ նախագահ Մրբա-
զանը բեմ ելլալով խօսեցաւ դամբանականը, վեր հանելով հանգուցելոյն արժա-
նիքը, բարեմասնութիւնները եւ իր անբասիր կեանքին դուրասիւր ընելով երկնա-
յին մխիթարութիւն հայցեց որդւոյն Ազն. Միհրան ԷՖ. Սեթեանի եւ պարագաներուն :

Դամբանականէն վերջ՝ ընկուզեմիէ դազաղը շեղ մեռելակառքի մը մէջ
դրուելով՝ փոխադրուեցաւ Սկիւսարի Ազգ. Գերեզմանատունը, որուն կը հետեւէին
յիսունէ աւելի կառքեր, եւ որոնց միջոցաւ յուղարկաւորները մինչեւ գերեզման
հետեւեցան դազաղին՝ իբր վերջին յարգանք հանգուցեալ տիկնոջ, ուր ներկայ-
ները իրենց խորին ցաւակցութիւնները յայնցեցին Ազն. Միհրան ԷՖ. Սեթեանի
եւ մեկնեցան :

Խմբագրութիւնս իր խորին ցաւակցութիւնները կը փութայ յայնքէլ Ազն. Միհ-
րան ԷՖ. Սեթեանի, ինչպէս նաեւ բոլոր պարագաներուն, իրենց վիճակած այս
դառն կորստեան առթիւ : ԽՄԲ.

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՈՒԻ ԿՈՂՄԵՐԸ

Ամենայն վերապահութեամբ կը փութանք յայտնել թէ՛ հրապարակի վրայ յաճախ գործածուած քանի մը փոխաբերական ասացումներ, թէպէտ և նուիրագործուած, արժանապատուութիւններ վիրաւորելու հանգամանքն ունին:

Խթանն, որպէս գիտէք, երկաթեայ սրածայր գործիք մ'է, որով գիւղացին կը խթէ արօրի կամ սայլի լծուած եղները կամ կովերն, որպէս զի քալեն: Եազլըխճին ալ՝ երբ Սարը-եար ջուրերը երթայ՝ յիշեալ գործիքն պլտիկ փայտի մը ծայրն անցունելով՝ կը գործածէ խթել էչն, որպէս զի շուտ քալէ: Եչերուն ներելի է՛ յամբ քալելը. աս խեղճերուն ճակատագիրն ալ այս է:

Ա՛րդ, շատ անգամներ կը կարգամ լրագրաց մէջ.

«Ասիկայ խթան մը պիտի ըլլայ մեր գրագէտներուն և բանաստեղծներուն եւայլն»: Կովերու և էչերու յատուկ գործիքով խթել գրագէտներն ու բանաստեղծները ... պաղ չէ՞ քիչ մը ... Ի՛նչ կըսէք ... մանաւանդ թէ վիրաւորել չէ՞ գրագէտներուն և բանաստեղծներուն փափուկ ... զիստերը: Արժանապատուութիւնը՝ հապա ... ասանկ վտանգաւոր փոխաբերութիւն կըլլայ, ասանկ կատակ կըլլայ:

Դարձեալ գիտենք թէ ընդհանրապէս ձին, ջորին, էչն, կովն և եղն կից կը նետեն երբ իրենց շահուն դպինք կամ ուրիշ անիրաւութիւն մ'ընենք իրենց: Այս կենդանիներուն զէնքերն իրենց ետեւի ոտքերն են: Տեսած է՞ք մարդ մ'որ կից նետէ քեզ երբ իրեն հետ վիճաբանութիւն մ'ունենաս: Ո՛չ: Գրագիտութիւնը սակայն շատ անգամ կըսէ հրապարակի վրայ. «Այս ինչ անուն մէկը կաքացի խթանի դէմ»:

Գրագիտութիւնն ուրեմն նախ մարդս չորքոտանի կայլակերպէ, և յետոյ կից նետել կուտայ անոր:

Ասանկ փոխաբերութիւն մը կարգարանայ տասնեւիններորդ դարուս մէջ.

Ո՞վ չգիտեր թէ սահմն ինչ է:

Ո՞վ է՛ կարդացեր լրագրաց մէջ:

«Այս ինչ անուն մէկը ընտանիքին սանձերը ձեռք առաւ, ան հիմա աղէկ կը քալէ կոր»:

Այսինքն բանիւմն կը քալէ կոր:

Եւ լրագիրները գոհութիւն կը յայտնեն այս անուան տիրոջ հասցէին:

Օր մ'ալ թերեւս ըսեն.

«Ազգային վարժարանաց ընթացքը շատ աղէկ է, որովհետեւ կըթական տեսչութիւնը մեծ հոգ կը տանի հոգաբարձութեան անդամոց պայտերուն»:

«Շնորհակալեաց արժանի է այս ինչ ընկերութիւնը որ Ս. Զատիկի առթիւ թաղին աղքատիկ տղայոց բաշխեց մէյմէկ ձեռք համետ, (ֆոսթիւմի տեղ)»:

Ո՞վ կրնայ բերանը բանալ, փոխաբերութիւն է, ասանկ բաներ կ'ընէ:

Առակարանութիւնը հապա:

Դեռ քանի մ'օր առաջ մէկն իւր բարեկամներէն մին համոզելու համար խնդրոյ մը նկատմամբ՝ Լաֆօնթէնի իշուն նմանցուց զայն:

Չկրցաւ բողոքել:

Թեմսիսիս խաբա օլնազ:

— Էչ ըսաւ ինձի:

— Հայհոյութիւն է:

— Ես էչ չըսի:

— Հապա:

— Լաֆօնթէնի էչը ըսի:

— Սանկ ըսէ ... ատ ուրիշ ինչիւր ... բարեկամ իրաւունք չունի բողոքելու, դատը կը կորսնցնէք:

— Չէ՞ մի որ էչ ըսաւ:

— Էչ ըսեր, բայց նմանութեամբ ըսեր է, բուն նպատակը քեզի էչ ըսել չէ, այլ գործը քեզի բացատրելու համար օրինակ մը մէջ բերեր է:

— Մանաւանդ թէ այդ առակով իւր իրաւունքը յայտնեցի և պաշտպանեցի:

— Ասանկ ալ ըլլալէն ետքը շնորհակալութիւն յայտնելու էր իրեն: Ձեր անմեղութիւնը յայտնելու համար պատմած է այդ առակը:

— Ինձի կտոր մ'ալ խոտ կերցուց:

— Առակն այնպէս պահանջեր է:

— Հակառակորդս ծեր մարդ ըրաւ, անալ թող էչ ընէր:

— Առակին պահանջումը ... ասանկ յար-

ժարեր է աղաւս . . . ինչո՞ւ խօսք չես հաս-
կընար:

— Ուրեմն անպատուարեր չէ՞ ինձ այս
խնդրոյն մէջ Լաֆօնթէնի էշ ըլլալը:

— Բնաւ մի՛ տարակուսիր:

Մարդը գո՛հ կըլլայ և ամէն անգամ որ
իւր դատը մէկու մը պատմելու հարկն զգայ
կսկսի միամտաբար ըսել. «Մեր խնդիրը շատ
կը նմանի Լաֆօնթէնի մէկ առակին: Սեպէ
թէ ես էշ եմ, հակառակորդս ալ ծեր մ'է:
Ազուոր մարգագետին մը ձգեց զիս ուզածիս
պէս արածեցայ, նստեցայ, ելայ, գլտորեցայ,
պառկեցայ: Մարգագետինն տէրը երեւալուն
պէս՝ Տէրս «Փախչինք» ըսաւ, — ինչո՞ւ
պիտի փախչինք ըսի, դուն գնա, չէ՞ մի որ
էշ եմ, ով որ ալ ըլլայ տէրս, վրաս բեռ
պիտի բեռնէ: Ինտո՞ր է իշուն պատասխա-
նը, խելացի պատասխան չէ՞: Չերթար ա՛, ինչո՞ւ
երթայ»:

Դրագիտական այս ձեւերն՝ որքան ալ
զօրաւոր փաստեր ունենան՝ քաղաքավարա-
կան օրինակ հակառակ կը թուի ինձ, մանա-
ւանդ երբ անխորի գործածութիւն ամենուն
համար: Այդ ձեւերը վարելու է այնպիսի
անձանց համար որ իրօք ծոյլ, տգէտ, անձ-
նապաստան են և արժանի փոխարեւարար
գործածուած բառերուն յատուկ նշանակու-
թեան և հաւասար առակախօսին չորքոտանի,
անմահ դիւցազանց:

Յ. Յ. ՊԱՐՈՆՆԱՆ

ԴՐՍԵՐԵԻՈՅԹ

[ԱՆԳԼԻԱՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ]

Ամէնէն մեծ խելացութիւնն է ենթակայի
մը նկարագիրն ուսումնասիրել, երբ անիկա
բոլորովին անգիտակ է այդ մասին, դէմքի
արտայայտութիւնները — մանաւանդ աչքե-
րը — մէկ վայրկեանէն միւսը փոփոխական
ըլլալուն՝ ուսումնասիրողը ճիշդ արդիւնքի
մը չեն հասցուներ:

Կերպարանքէ մարդ ճանչնալը զբօսուցիչ
պիտի նկատուի, մանաւանդ երբ թռամվայ
մը գտնուինք որ լիք է: Դիտենք:

Եթէ գլուխ մը բարձր բռնուած է՝ յատ-
կանիչ է ուղիղ նկարագրի, իսկ եթէ մէկ
կողմ հակած՝ զգայուն խառնուածքի: Եթէ
նստողներէն մին խօսակցութեան բռնուած
ըլլայ կամ խորունկ խոկումներու մէջ թաղ-
ուած՝ արտայայտութիւնը ուսումնասիրելու
քիչ առիթ կայ, որովհետեւ ակներեւ է որ
պարագաներէն ազդուած է ան: Նայինք հի-
մա թէ քննած անձերնիս ի՞նչպէս ծալքեր է
ձեռքերը, եթէ աջը միշտ ձախին վրայ նե-
տած է և արմուկները՝ կուշտերուն մօտ,
կծծի մըն է և վեհանձնութենէ՛ զուրկ: Ու-
սերէն ձախը եթէ վար հակած է՝ աղէկ նշան
չէ, իսկ եթէ աջը՝ ապացոյց է վատառողջու-
թեան և ուրիշներէ դիւրաւ ազդուելու: Լիբր
ու լիտի մարդու մը երեսը նայած ատեննիս՝
պիտի նշմարենք որ մէկ ունգը միւսին վեր
է, իսկ երբ զոյգ ունգերը միասին բարձրա-
ցած, նեխասաստին մէկն է հնթական: Ա-
նոնց որոնց վերի ակունքները դուրս ցցուած
են՝ կիրկիւր չեն ըլլար: Դէպի յառաջ եղած
թուշը կը ցուցունէ դառն մտածումներու
ձգտում մը: Նուրբ յօնքեր — մէջտեղէն ի-
րարու կցուած — նշանակ են գէշ բնոյթի,
իսկ թաւամազ ըլլալով կցուած յօնքերը նշա-
նակ են թէ զայն ունեցողին բարկութիւնը
շուտ կանցնի: Լայն ականջները առատաձեռ-
նութիւն և մտածման վեհութիւն ցոյց կու-
տան, իսկ հովահարածեւ ականջները՝ դան-
դաղութեան, տխմարութեան:

Ձվային մարդիկ արագ արագ ու կարճ
քայլեր կառնեն, լայնախոհ անձը դիւրին ու
հանդարտ քայլերով կառաջանայ, թեթեւ մը
հակելով երանքները (գալչա) և շատ պինդ
չի բռնելով ծունկերնին:

Անիկա որուն թեւը ետեւ առաջ կը ձօ-
ճի քալած պահուն՝ բնկերականութիւնը սի-
րող մըն է: Քալած ատենը իրանը կանգնա-
բերձ բռնող մը կրնայ նկատուիլ մէկը որ
մարդերն ու իրերը միակողմանի կը դատէ և
սովորաբար սոնք բնոյթ մը կունենայ: Մա-
տը բաժկոնակին անթատեղին կառչեցուցած
անձը ազնիւ հպարտ մըն է յաճախ, ու քիչ
շատ համարում ունի անձին վրայ:

Թ-Օ





Ահա քե ինչո՞ւ չեմ ամուսնացած...

Պզտիկ փոփոխութիւն մը մեր անգուգահան Ալիսայանի հրաշակերտ ոտանաւորէն, որուն մէջ ըսած է՝ ահա քե ինչո՞ւ չեմ ամուսնացած: Ամուսնանա՞լ ... jamais de la vie !

Չեմ գիտեր ինչո՞ւ երբ ամուսնանալու խօսք ըլլայ՝ ցուրտէն մսածի պէս մորթիս վրայ պտըտիկ պտըտիկ փշիկներ յառաջ կուգան և կը ցնցուիմ, ինձ այնպէս կուգայ որ Ֆիեվըր քիֆօի նօպաներու կը մատնուիմ: Ինչո՞ւ ...:

Կեանքիս մէջ մէկ քանի անգամներ ամուսնացած և կնոջ հոգեբանութիւնը ուսումնասիրած չեմ, ոչ ալ անոնցմէ բան քաշած ուրիշներու պէս, և սակայն կը սոսկամ երբ մէկը ելլայ գովեստը կարգայ այս ինչ օրերդին, բերանս փնտռելու համար և կամ առաջարկէ որ ...: Չէ՛, չէ՛, չէ՛... խօսքն անգամ ջիղերուս կը դպի գրաւոր կամ բերանացի:

Քսավիի sp Մօնթէքէնի համար կ'ըսեն թէ, այդ հոշակաւոր վիպագիրը, երբ ո՛ր եւ է վէպ մը սկսի, իր նիւթին անձինքը մէկ մէկ փայտէ պէպէքներու ձեւով դէմը կ'առնէ, որպէս զի չի շփոթի, և թէ մէկ մեռնողը ուրիշ անգամ կրկին չը յիշէ: Ձեր անառակ որդին ալ երբեմն նոյն բանը կը խորհի առանց Մօնթէքէնի մը ըլլալու:

Կը պատահի որ շատ անգամ գիշերները դուրս չելլամ և փակուիմ իմ առանձնասենեակիս չորս պատերուն մէջ, և ահա ինչպէս սովոր է մարդ մինակ մնալուն պէս վախուբաներ կը յիշէ, բէրիներ կ'երեւակայէ և այլն. — ամուսնութեան գաղափարը խոթելախի մը պէս կը ցցուի դէմս:

Վախս փարատելու համար թանգարանիս կը մօտենամ, կ'առնեմ Մըմբեանի հին օրերը, և Խաչատուր Միսաքեանի կենսագրութիւնը, ու հազիւ էջ մը բան կարդացած թէ չէ՛ մէկ

կողմ կը ձգեմ, կարծես թէ կինս ըլլար դէմս և ձեռքէս հատորը քաշելով պօռար երեսիս « հայտէ պառկինք... »:

Ինտրան կ'առնեմ անով միսթարուելու համար, չորս տող միայն կարդացած եմ դեռ և ահա հատորը ձեռքէս կ'իյնայ, և ինձ այնպէս մը կուգայ որ՝ կինս քովի սենեակը ուրիշ մը կը գգուէ ու ես ասդին աւանաւ կարար Ինտրա կը կարգամ ...:

Ծիածանը հոս մօտս է, կ'առնեմ, ձեռնածուի մը jeux de cartes-էն pluie de cartes-էն պէս ֆը՛ռ...ո՛ւ...ո՛ւ...թ'... մէկ ծայրէն միւսը, և աչքերս վերցնելով երբ դրանս կը նայիմ, ինձ այնպէս մը կուգայ որ կինս, առանց հրամանի իմ քնանալէս վերջ տօմինս մը հագած դուրս ելած է և դեռ չի լուսցած իր entrées կընէ կոր ձերմակ սկառքիներուն քիթերուն վրայ կոխելով՝ խորամանկ փխիկի մը պէս ...:

Քսաիմին Տուճէն Գետը կուգեմ կարգալքիչ մը, ու երբ քանաթէիս վրայ երկնցած հազիւ թէ յառաջաբանը սկսած թէ չէ, մաղերս կը ցցուին և աչքերս շիտակ մահճակալիս վրայ կը յառնեմ, ուր, ինձ այնպէս մը կուգայ որ երկու գլուխ կը տատանին բարձիկիս վրայ ...:

Այս անգամ ալ Թանգարանը ձեռքս կ'անցնի, Տէր և Տիկին Հ.Ասատուրի գեղեցիկ մէկ brochure-ը, կը բանամ կը թղթատեմ մէկ երկու couplets ոտանաւոր կուգեմ կարգալքայց ...: Ինձ այնպէս մը կուգայ որ կինս ալ նոյն պահուն քիչ մը անդին մօմի լոյսով նամակ մը գրելով կըբաղի, նամակ մը՝ որուն վրայ սապէս սկսած է՝ հոգիս Արշակ ...:

Խենդենալս բան մը ըսել չէ, ջիղերս թունդ ելած ոտից ցգլուխ կը դողամ: Ինչպէս սատկըցնեմ ժամանակս, Աստուած իմ, ինչպէս վանեմ սա ալլանդակ գաղափարները մտքէս:

Ճար չիկայ, պէտք է բանով մը զբաղիլ, ընթերցում, ընթերցում մը որ, կարենալ

մաքիս վիճակը բարեկեցիկ և հանդարտեցնել երեւակայութիւնս :

Թէ ոգիկին տարեցոյցը ... հա՛, այս երբ-
հերանգ հատորէն կարելի է օգուտ մը կըր-
նամ քաղել, և հակառակ տասն անգամ կար-
գացած ըլլալուս՝ կրկին կը բանամ, միշտ
նոր բան մը գտնելու յուսով, և ահա աչքե-
րս կը մթագնին, մազերս կը ցցունին, ինձ
այնպէս մը կուգայ որ կնոջս հասցէին ուղ-
ղուած քառթ վիզիթ մը այդ դիրքին մէջը
մոռցուած է և որուն վրայ կը կարգամ՝

Երջանկութեան աղբիւրը ,

Մեր վերջին տեսութեան վրայ ուր օրեր
անցան եւ չերեւացիք , այս իրենկուն տանիի
գարեջրատունը կապասեմ , հոն գտնուեցեք ,
ես մը քսելիքներ ունիմ , ամուսիններդ կար-
ծեմ այս իրենկուն ուս կուգայ , դուք կրնաք
վայրկեանը վայրկեանի հասնիլ , խնդրեմ մի
մերժեք :

Ընդունեցեք համբոյրներս

Ա . Բ . Գ .

Այլ դիմանալու բան չէ , տեղէս կ'ելլամ ,
սենեակին չորս կողմը կը պտըտիմ , գանկս
պայթելու աստիճան տաքութեան մէջ է ,
չորս դիւ կը նայիմ ու բան մը չեմ գտներ
միտքարուելիք , գրատունս ալ կարծես լուռ
հեգնանքով մը վրաս կը խնդայ և իր լեցուն
ventreէն քրքիչներ կարծակէ , գէթ ինձ այն-
պէս կուգայ , և շիտակ վրան կ'իյնամ ... :

Պարտամենին Անգլանքը ձեռքս է հիմա ,
կարդալ կուզեմ , գէթ ոտանաւոր մը , երկու
տուն բան կարդամ և միտքարուիմ : Գիրքին
մէջ խորասոյճ՝ երբ հաղիւ երկու տող բան
կարդացած թէ չէ , ահա սենեակիս մէջտեղն
եմ , ինձ այնպէս կուգայ որ կ'իս , իր ճեր-
մակ մաթինէն հագած en grande décoleté
ոտքերուս փարած ներում կը խնդրէ . « հո-
գիս ... ներէ՛ ... սատանան յողթեց և ի-
րաւ է թէ փորձուեցայ , սակայն կերպնում ,
կերպնում որ ուրիշ առթիւ մի եւ նոյն կա-
ցութեան մէջ չպիտի գտնուիմ ... խնայէ
ինձի , հոգիս , խնայէ՛ և ներողամիտ եղիր , ես
նորէն քու անմեղ հրեշտակդ պիտի ըլլամ ,
ներէ՛ ... » :

Այս անգամ ինքզինքմէս ելեր եմ , չեմ
գիտեր , սա չափը միայն ըսեմ որ՝ երեւակա-
յական կ'իջալիմ դէմ զգացած բարկութիւնս չի

կրնալով զսպել , զարնել ուղած ժամանակս՝
անանկ մը ոտքս մահճակալին երկաթին եկաւ
որ ... ու՛՛ ... ցաւէն սթափեցայ և պահ
մը մնացի այդ վիճակին մէջ , ձեռքս ոտքիս
մատներուն վրայ ... :

Գո՛ւն ... ախ անուշ քո՛ւն ... : Ո՛ւր
ես , Մորիէոս , արդեօք գիրկիդ վրայ տեղ
չիկա՞յ , որպէս զի գլուխս հանգչեցնեմ ... :

Բիշ մ'ալ օրուան թերթերը աչքէ անցնել
ուղեցի , անոնց ալիկօսիկ պէսպիսութիւննե-
րովը հրաւիրել ուզելով՝ անուշիկ և բաղձա-
ցած քունս ... :

Չեմ գիտեր որ թիրթին որ սիւնակն էր
որ ձեռքս անցաւ ու սկսայ կարթալ :

Մանկամարդ կի՛ն մը իր ամուսինը բու-
նիկ մեջ խեղդելով՝ ինչքերը առեւ կծիկը
դրեւ է , երկու տղամ ալ հոն ձգելով ան-
կողմին մեջ :

Հէ՛ ...

Աչքիս կերեւայ արդեօք , կարդացի՛ , կըր-
կին կարդացի այդ յողուածը :

Կին մը որ իր ամուսինը կը խեղդէ՛ ...
և կանոնէ կը քալէ , երկու զաւակ ալ հեօթի
ձգելով ...

Այսչափը բաւական էր ինձի ... ալ չի
չարունակեցի : Նոյն իսկ մօռֆիքը այսքան
չպիտի կրնար դմբեցնել դիս :

Եւ ահա՛ թէ ինչո՞ւ չեմ ամուսնացած , և
կամ , ահա՛ թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար :

ԲՕՊԵԱ

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Երկուսեքքի Բերա , Պեորկեաններու բը-
նակարանը տեղի ունեցաւ ծանօթ վաճառա-
կան Ազն. Յովնան ԷՖ. ձեզվեհեանի նշանա-
խօսութիւնը՝ ընդ Ազն. Օր. Բեկրունի Յ. Նի-
ֆօքեանի , ի ներկայութեան երկու կողմի ազ-
գականներու եւ բարեկամերու :

Յովնան ԷՖեհի ինքնօգնութեամբ զարգա-
ցած ըլլալով՝ այսօր կարելոք դիրք մը եւ
հաւքաւ մը ունի Զօնկուլսափ առեւտրական
հրապարակին վրայ : Իսկ Օր. Նիֆօքեան՝
պարկեօս եւ զարգացած օրհորդի մը բոլոր
ձիւրքերով օժտեալ , պատիւ կը բերէ քե իր ըն-
տանիքին եւ քե համայնքին :

Խմբագրութիւնս շեմապէս կը շնորհակալուի
երկու նշանակները եւ անոնց պարագայները ,
մասնաւորապէս Ազն. Տիկին Թեոդիկն , որուն
եղբայրն է Յովնան ԷՖ. ձեզվեհեան :

ԽՈՍՏՈՎ ԱՆԱՆՔԸ

Ամէն անգամ որ եկեղեցւոյ բակը գտնուիմ և աշուկներովս տեսնամ քահանայ մը, որ բարեպաշտ կին մը կամ օրիորդ մը՝ խնդիր չէ, ետին ձգած խուց կը տանի խոստովանցընելու համար, հաւատացէք տէրտէր ըլլալս կուգայ, ձգել աշխարհային զեխ և շլացուցիչ վայելքները և գոհանալ երեցկիւնով մը՝ նիւթականս ալ Տաճարէն, հոգեկանս երեցկիւնէն, և բարոյականս ալ խուսկէն մոմէն սպասելով:

Արդեօք ինչ աղուոր տէրտէր մը պիտի ըլլար ձեր Լիլան, երեւակայեցէք անգամ մը և պիտի համոզուիք:

Նախ շատ մը ծուխեր վրաս պիտի դառնային, Տէր Լիլան կուգենք ըսելով, ամէնքը զիս տուն պիտի հրաւիրէին ճաշի, և այնքան բան առջիս պիտի դնէին ուտելու որ, կշտանալէս վերջը երեցկիւնիս ալ բաժին պիտի ելլար, կիներուն էն մեղաւորը ինծի պիտի գտնար խոստովանելու համար, օրիորդներէն է՛ն մօնտէնը ձեռքս համբուրելով՝ թողութիւն պիտի խնդրէր գործած և գործելիք մեղքերուն համար, վերջապէս պիտի վայելէի այնպիսի առաւելութիւններ՝ որոնց քառորդը չունին այսօր մեր չնորհունակները:

Եւ սակայն իմ երեսէս շատ տուներու մէջ կուրը պակաս չպիտի ըլլայ եղէր, հոգս, ամուսիններ պիտի նախանձին եղէր սըխ սըխ տուն օրհնենք երթալուս համար, բէ՛հ ... Ես ալ ասդին՝ չըքը չըքը դրամները գանձելով՝ տունի, եկամուտի տէր պիտի ըլլամ եղէր ... անա բուն խնդիրը:

Բայց ես որ դրամի շատ աչք չունիմ, վկայ լրագրական վիճակս, որ, եօթը տարիէ ի վեր անընդհատ կը շարունակեմ կանոնաւորապէս, վճարելով թերթին բոլոր ծաղքերը, և փոխարէն ... սպասելով կսպասեմ որպէս զի կարգ մը «կառնէ կուտէ չիտար, ուզէնէ մի տար, ես աղային քէֆիլ եմ» խըլըխըլը բաժանորդներ հաճին իրենց պարտքը վճարել օրը օրին:

Բայց ի՞նչ էր մեր ըսելիքը ..., շարունակենք:

Փնտուցի, պրպուցի աջ ու ձախ խորհրդածեցի և յանդեցայ սա եղբակացութեան թէ՛ հանգիստ, անդորր, և լայնօրէն ապրուելու համար տէրտէր ըլլալէն ուրիշ ճար չիկայ:

Հիմա ձեզի նկարագրեմ տէրտէրով մը առաւելութիւնը, սա պայմանաւ որ այդ երանելի պաշտօնը ինձմէ առաջ չի վազէք փորձելու վերջէն իրարու մօրուք կը կզենք, չեմ խառնուիր:

Առաւօտուն կանուխ տէրպապան եկեղեցի երթալուն կը նայի որ թոնթոչիկ ու չի նետուելիք կին մը իրեն կսպասէ:

— Ողջոյն օրհնած ...

— Օրհնեցէք Տէրպապա ...

— Ի՞նչ է ան, առտուն կանուխ ի՞նչ բան ունիս հոս ...

— Խոստովանիմ պիտի Տէրպապաս, վախիթ ունիս աճապա ...

— Օրհնած, բէք աղէկ ամա տահա խախտէին թէլֆէն լեզուիս վրան է ... ինչ է նէ, պահարանին դուռնէն ներս մտիք տէ ես ալ սա սիկառաս լմնցունեմ գամ ...

— Շատ աղէկ Տէրպապա ըսելով՝ աղւորիկ կինը պահարանին դռնէն եկեղեցի կը մտնայ և քիչ մը վերջն ալ տէրպապան կերթայ զայն գտնելու:

— Է՛հ նստէ նայիմ սա միտէրին վրայ ըսելով՝ Տէրպապան իր թօմպուլիկ ձեռքը կնոջ գլխուն վրայ կը բռնէ ու կսկսի աղօթել, ատեն ատեն մեղայ Աստուծոյ ըսել տալով կնկանը:

Քառորդ ժամ վերջը աղօթքը լմնցնելով, ըստ սովորականին Տէրպապան կը հարցնէ կնկանը՝

— Ինծի նայէ օրհնած, մարդ ենք սխալական ենք, էկէր քի խիղճդ տանջող մեղք մը ունի՞ս նէ խոստովանէ, նայէ հոս մարդ չիկայ, մի՞նակ ենք, ես ալ քեզի թողութիւն տամ ...

— Հոս մարդ չիկայ ի՞նչ ըսել է Տէրտէր, ատ ի՞նչ լախըռտը է ...

— Անանկ է ես, սանքի մի քաշուիր ...

Ներսիսի դ մեղք մը ունիս նէ դուրս հանէ, ես քեզի թողութիւն պիտի չնորհեմ Աստուծով ...

— Աման տէրտէր, ի՞նչ որ կայ նէ ըսիր եղար, Ֆախաթ իրաւ քի կողտուկ բաներ մը ունիմ ամա ըսուելիք չեն ...

— Հէլէ հէլէ, դուն ըսէ ճանըմ, չէնէ տահա պէթէր մեղքը կը մտնաս քուրիկս, դուն խոստովանէ նայիմ ի՞նչ ըրիր ...

— Հիչ, ինչ պիտի ըլլայ, օր մը միսաֆիր ունէի, վրաս ալ փարայ չիգար, դրացիներն քիւմէսը մտայ ճալճալ մը աշըրմիշ ըրի, դըրի տապկեցի, թիւյերն ալ օճախին մէջը դըրի վառեցի քի իզը թողը պէլի չըլլայ տէյի ...

— Էյ օրհնած, իրաւ քի ըրածդ գողութիւն է ամա, աս անգամ Աստուած թողութիւն չնորհեցէ ...: Տահա՞:

— Հիչ տահա՞ ... հա՛, օր մըն ալ կէնէ աս թառափնուս դրացիներ, տօմաթէսի բէստիլ էր չինէր թէփսիյով պաղչան ճուրը քաշել կուտար կոր, իպրէնմիշ եղայ տէ հէլվայի փատէ թգալը առի գացի կոլոճ մը աշըրմիշ ըրի տէ սիրտիս ալ տէրտ եղաւ ...

— Էյ աս ալ գողութիւն կը սեպուի, մէյ մըն ալ մընէր օրհնած, Աստուած թողութիւն չնորհեցէ ...: Տահա՞:

— Մեր քովի մահալլէն աղջիկ մը նշանած էր, զաթը ատ բօստալին խարէզ ունէի, օր մը նշանած տէլիխանլըին ճամբան պէքէլէցի տէ ըսի քի քիթը կը հոտի տէյի, ան ալ նշանը ետ ըրաւ ...

— Էյ ... ատ տահա մեղք բան ես ըրեր ... նէիսէ Աստուած թողութիւն չնորհեցէ ...

— Ան է քի սըրավարտի պիտի ըսեմ նէ, աս ալ դուրս տամ, տէրպապա ...

— Հա եա, պէտք է քի բիւթիւն ըրած մեղքերդ մէկիկ մէկիկ ըսես ...

— Էհ ... օր մըն ալ ... աս տէրպապա կը խպնիմ կոր ...

— Ճանըմ աստեղը խպնելու բան չիկայ, մենք քահանայ ենք, ըսէ՛, ըսէ՛ ...

— Ինչ գիտնամ, օր մը ... աղաջ սա ըսեմ՝ քի գլխաւորս ուճ տէրէճէ խըսխանճ է ...

— Կրնայ ըլլալ ... էյ ետքը, կ'ըսէ տէրպապան հետաքրքիր ...

— Իշտէ առաու մը չամաշըր փոխելու համար չապիկս հանէր էի քի թէմիզը հագնիմ տէյի ... դուրսը սօխախէն աճի աճի ծան մը առի, հէմէն չըլլախ ըլլալըս մոռցայ տէ պաղնեց ելածի պէս բէնճիրէն կախուեցայ, վարէն ալ իլիմօնճի մը կասնի կոր եղէր, իս ատ խըլըխովս տեսաւ ...

— Ձարար չունի ճանըմ, ես ալ գիտայ քի պաշխա բան մը պիտի ըսես, հոգ չէ, Աստուած թողութիւն չնորհեցէ ...: Տահա՞, կ'ըսէ քահանան:

— Ի՞նչ գիտնամ, ո՛րմէկը միտքս բերեմ, իշտէ հա՛, օր մըն ալ տունը մինակ էի տէ, տաքըս սանճի ըրեր է, կանուխ տուն եկաւ, ես ալ ան օրը չամաշիր ունէի, սոթթուորած, պիլէկներս բաց՝ պալտըներս օռթան թէքնէին տակէն գացի դուռը բացի նէ, սանկ չիլլիքիս մախաս մը դարկաւ, իշտէ ան օրէն պէրի է թուռլի մը կը նայի երեսիս տէ, աս բանը խղճմտանքիս տէրտ եղած էր ...

— Օրհնած, Աստուած թողութիւն չնորհեցէ ամա, նայէ քի մէյ մըն ալ ատանկ վիճակի մը մէջ ըլլաս նէ, հէմէն դուռը չի բանաս, ամէն մարդ տաքըռդ պէս չըլլար...: Տահա՞, կ'ըսէ տէրպապան կակողնացը կերած, և սպասելով որ կինը ուրիշ գաղտնիքներ ալ դուրս տայ:

— Բան մըն ալ կայ ամա, չեմ կրնար ըսեր Տէ՛րպապա ...

— Ըսէ՛, ըսէ՛ քի, մէկ ողորմեցիով լմընայ երթայ, ետքէն տահա պէթէր մեղքը կը մտնաս, չեմ խառնուիր, Աստուած կը սրթողցնես ...

— Էյ չըսեմ նէ չըլլա՞ր ... բէք օռթաէն ըսուելու բան չէ տէ՞ ...

— Ըսէ՛, ըսէ՛, քահանայի խոստովանիս նէ զարար չունի, մեր կարգը կը վերցունէ, կ'ըսէ քահանան՝ աչքերը պիչ պիչ կնոջ վըրայ յառած:

— Գիշեր մը կնքահարս մեղի կենալու եկաւ, երկու ծուկ իլէն տէմէթ մըն ալ մայտանոս հետը ...

— Էյ կրնայ ըլլալ ա՛, ետքը ...

— Իշտէ կլխաւորիս հետ ըռախիլէնմիշ եղան, ինճի ալ երկու խատէխ մը տուին, անոնք կլոխնին բռնեցին, ես ալ թուռլի մը եղայ, նէ իսէ, կերակուրնիս կերանք, եղայ

կնքահորս տեօշէկը ձգեցի, քիչ մը լափ լուփ ըսելնիքէն պառկիլ ելանք, գլխաւորս աճալիպ է, կլոխը բարձին դնելուն կիպի խըռլամիշ կընէ, նէ իսէ ան պառկեցաւ, ետքէն խելքս տուն բերի քի, օտան ճուր չեմ գրեր, էյ մտմտացի քի տիւզ ըռախին սիւնկէրի պէս ճուր կը քաշէ, հէլպէթ գիտնալու ես տէր-պապա ...

— Ձէ օրհնած, չեմ գործածեր քի գիտնամ, կ'ըսէ Տէրտէրը, ետքը ...

— Հա', ինչ է նէ, վար ինջայ, սիւրահին լեցուցի, վեր ելայ օտան մտայ քի՝ ամօթ է ըսելս, ճամպազի պէս ֆանէլայով օտային օւթան կայներ է պըյընները կոլորէ կոր ...

— Էյ ... կ'ըսէ Տէրպապան ծունգին մէկը վեր առնելով և երկու ձեռքերը իրարու մէջ ոտքը բռնելով, էյ ...

— Աման տէրտէր, եկուր մնացածը չըսեմ ... կը խախիմ կոր ... կըսէ կինը քիչ բան մը կարմրելով, այնպէս որ իր գեղեցկութիւնը անգամ մը եւս դուրս կուգայ ...

— Զարար չունի օրհնած, ալթըն պաշլայեցիր տէ աստարը ըսի՛ր նէ լմնցուր, ես ալ հասկնալ կուգեմ կոր քի սօնը ի՛նչ եղաւ տէյի ...

— Էհ, քանի քի դուն ալ հասկնալ կուգես կոր նէ ըսեմ: Սիւրահին ծառքս ներս մտնալուս պէս կնքահորս ոտքերուս չինայ մի ...

— Էյ ... կըսէ տէրտէրը, մօրուքը սըլս սըլս մատներովը սանտրելով, ետքը ...

— Աման կնքահոր աղա, ի՛նչ կընես կոր ելիր կայնէ ըսելուս չի մնաց ... շա՛փ ...

— Քա օրհնած պագա՛ւ ... կընդմիջէ տէրպապան ...

— Պագաւն ալ խօսք է ...

— Ետքը ...

— Ետքը ելայ կայնեցայ, շիտակը կուգես նէ՝ ես ալ գէշ եղայ ամա՛, ինքզինքս բռնեցի քի, փճապ իս տէնէմի՛շ կընէ կոր տէյի ...

— Էյ հէմէն դուրս չելա՛ր օրհնած ...

— Քա ելլալ ուղեցի ալ նէ՝ ծունգերս պաշլայեցին գողալ, մոս մոռ կտրեցայ, սէպէ քի վրաս մարելիք եկաւ, նէ իսէ, չիչէն

ձգելուս պէս, աս վայլեց կնքահոր աղա, ըսի սանկ սուռաթս թթուեցնելով ...

— Էյ ան ի՛նչ ըսաւ ... կըսէ տէրտէրը ...

— Հիչ անտեղուանքը չեղաւ, ոտքդ պագնեմ Ագապի, քեզի համար կը լմննամ կոր ըսաւ տէ հաչան թեւերէս պիտի բռնէր ...

— Էյ չափուխ ըսէ օրհնած, թեւերէդ պիտի բռնէ՛ր ...

— Հա՛ ... նէ իսէ, թամամ քի թեւերէս պիտի բռնէ՛ր ... ես ինքզինքս դուրս ձգեցի, հէմէն օտաւ մտայ, դուռին սիւրկիւն գրի, ետքէն թամամ կէս սահաթ վրաս դող մը եկաւ, սարսըռացի, դողացի, նէտէն սողրա ետթախս մտայ սաղ սէլիմ ...

— Օ՛իս ... էյ Աստուած թողութիւն չնորհեցէ օրհնած, ես ալ քեզի հետ պարապար դող ելայ ... վախցա՛յ քի ...

— Ձէ ... Աստուած ինծի ատ մեղքը թող չի հարցունէ, չէ՛ ... Աստուած չընէ, բիւրճներու պէս էրիկս դրած է, անոր վրայ ծուռ մի նայի՛մ ...

— Աֆէրիմ քուրիկս ... նայէ քի պաշլա վախիթ ալ սատանային ույմիշ չըլլաս տէ նամուսովդ սպրիս, գէրէ անկէ միւծ մեղք չիգայ, հէմ ալ ատ մեղքին ես թողութիւն չեմ կրնար տար, նէ իսէ, ուրի՛շ ... կըսէ Տէրհայրը, մօրուքէն մէկ քանի թէլ շոյելով:

— Աստար, տահա ի՛նչ ըլլայ տէ՛րպապա, պաշլա թառափէ պիլլօռի պէս եմ, հիչ ուրիշ մեղք մը գործած չեմ ...

— Էհ ... Աստուած թողութիւն չնորհեցէ օրհնած ըսելով՝ ճամբու կը դնէ, և հազիւ թէ կինը շալը գլուխը պահարանէն դուրս կելլայ, նայիս երիտասարդ մը հազիւ 30-35 տարեկան, քահանան կեցնելով,

— Օրհնեցէք տէրպապա ...

— Աստուած օրհնէ տղաս, ի՛նչ է ան հիւանդ կա՛յ, մեռել կա՛յ, ինչ կա՛յ ...

— Ձէ Տէրտէր, խոստովանիմ պիտի ...

— Էհ, ես ալ գործ ունիմ ամա նէ իսէ, նստէ տէ խօստովանեցունեմ, կըսէ ու կրկին երկուքը մէկ միտէրին վրայ կը նստին:

Տէրպապան կսկսի իր աղօթքները կրկնել, և երբ կը վերջանայ, կրկին և կրկին կը հարցնէ երիտասարդին թէ՝ իր խիղճը տանջող մեղք մը գործած է ...

— Ձիյտեմ ամա տէրտէրպապա, նասըլ ըսեմ ... օր մը սիրտս նեղացաւ տէ կնկանս ըսի քի դուն փիտիկ եղիր ես քոթոտ ըլլամ տէ խալիին վրայ կզուլտինք տէյի ...

— Հայտէ օրհնած, կըսէ քահանան, ես այսօր մեռելի պիտի երթամ, ես թողութիւն տուի, ու կը մեկնի, մտադրելով անգամ մ'ալ չի հարցափորձել իր ծուխերը:

ԼԻԼԱ

ԿՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ

[Ի ՊԵՏՍ ԶԱՐԳԱՅԵԼՈՅ]

— Գեղեցիկ ու տգէտ կին մը սիրելը՝ փորձանքներուն ամենէն մեծին հանդիպիլ ըսել է:

— Կրթութիւնը ու քաղաքավարութիւնը գեղեցիկ կնոջ փայլը կաւելցնէ ու տգեղ կինըն ալ հրապուրիչ կընէ:

— Ամենէն գեղեցիկ ու ամենէն սիրուն կինը այն է՝ երբ գիտէ էրկամարդ մը սիրաշահիլ ու գործածել:

— Գեղեցիկ կին մը խաբելը՝ անգթութիւն է, իսկ կնոջմէն խաբուիլը՝ անմտութիւն:

— Տգեղ ու խոնարհ կին մը աւելի սիրելի ու հաճոյալի է՝ քան գեղեցիկ ու հրապարտ կին մը, վասն զի այս վերջինը կը նմանի սեղանաւորի մը ցուցափեղկին մէջ լեցուած սակիներուն, որոնք միայն չունեցողներուն բերնին ջուրերը կը վազընեն:

— Այն գեղեցիկ կինը որ իր գեղեցկութեանը վրայ վստահ ու պարծենկոտ է՝ երբէք կատարեալ սիրող մը չի կրնար ըլլալ:

— Կնոջ սիրոյն մի հաւատար, երբ տակաւին 20 տարեկան է, մի վստահիր խօսքին երբ 30 տարեկան է, այն ատեն միայն կնոջ սիրոյն ու խօսքին հաւատա՝ երբ արդէն 40ը անցուցած է:

— Գեղեցիկ կինը կը նմանի մեղրի՝ որ շուտով սիրտ կառնէ, կը նմանի քացախի որ սիրտը շուտով կը ճանկէ, երբ արդէն միջին հաշիւը չես գտած:

— Գեղեցիկ ու ժպտուն կին մը՝ միշտ կեանք մը կ'արժէ:

— Գեղեցիկ կին մը երբ վստահ է թէ զինքն իր գեղեցկութեանը համար կը սիրեն ու կը յարգեն, հետեւաբար պէտք է վստահ ըլլայ թէ՝ ինքն է աշխարհիս մէջ ամենէն թշուառ էակը:

— Կնոջ գեղեցիկը, էրկանը բարեկեցիկը, շատ անգամ դժուարաւ կը գտնեն պատառ մը հացիկը:

— Գեղեցիկ կիներն են թէեւ որ կը փնտռուին միշտ ամուսնութեան համար, սակայն յաճախ տգեղ կիներն են որ կ'ամուսնանան:

— Գեղեցիկ կիներուն գործած ամենէն ծանր յանցանքն իսկ գրեթէ միշտ ներելի կ'ըլլայ:

— Գեղեցիկ կնոջ մը հանդէպ ամենէն խելացի մարդն իսկ ամենէն մեծ ապուշութիւնները կ'ընէ:

— Ամենէն գեղեցիկ կինը բուն կինն է:

— Գեղեցիկ կինը կնոջ տեսականն է, իսկ բուն կինը գործնականը:

Սկիւսար

Բառսօճեկով գրեց
ՌՈՄԱՆՈՍ


POTPOURRI ORIENTAL

Pémbé Kiz

3. ՍԻՆԱՆԵԱՆ

Ստացանք Յ. Սինանեան էֆէնտիի երաժշտական մէկ նոր հեղինակութիւնը, թուրք երգահան Հայտար պէյի Բէմ Գէ Գէ Զ անուն ծանօթ օբլերէթին ընտրելագոյն եղանակները՝ դաշնակի համար յարգարուած, երկու ձայնատեսութեամբ մէջ (Թ. 1-2), Potpourri Oriental անունով: Ախորժաղուր ու ներդաշնակ եղանակաւորում մըն է զոր կ'արժէ որ ունենան ամէն դաշնակ նուագողներ:

Վաճառման կեդրոնատեղին՝ Բերա՝, Բասաթ Խրիսթաքի, Պ. Սօթիրի Բրիսթիտի վաճառատունը:



Ուր Ամբակումի սեղ Ան-
մեռուկ խօսք կառնե եւ
ցաւօք արի ու արցունքոս
աչեւով կը պատմէ Հանրա-
գիտակի ընթերցողներուն քե՛-
ի՞նչպէս Ամբակում իր ամե-
նասիրեցեալ բարեկամը ան-
կողին ինկած է . . . իյնա-
լիք սեղ չգտնելով՝ եւ անո-
ղոք հիւանդութիւնով մը կը
սառապի . . .

Մեր ամենասիրելի բարեկամը և հանրա-
ծանօթ Ամբակումը՝ տաան օրէ ի վեր անկո-
ղին կը ծառայէ . . . ծառայելիք բաթրօն մը
չգտնելով :

Անկողինին մէջ տարածուած է . . . ձեռքը
ձեռքին ու ոտքը ոտքին վրայ ու գլուխը
ոտքերուն տեղը և ոտքերը գլխուն տեղը
դրած է . . . :

Բժիշկները իր դադաղը . . . ա՛հ, ո՛չ, ո՛չ
ո՛չ, իր անկողինը չըջապատած են, ու օխա-
ներով . . . ձեռագիր, օ՛հ ո՛չ, ո՛չ, ո՛չ, դե-
ղագիր կը գրեն, որպէսզի փրկեն մահուան
ճիրաններէն՝ մեր ամենասիրելի բարեկամը :

Ո՛հ, տաքութիւնը այն աստիճան սաստիկ
է որ . . . ջերմաչափները կը ճաթին ու սենեա-
կէն ներս մտնելուդ . . . տաքութիւնը երեսիդ
կը զարնէ :

Ամբակում որպէսզի՝ դեղագործին պարտք
չընէ, հետեւեալ կերպով դեղերը չինել կու-
տայ . . . ինծի՝ առանց դեղագործութենէ փը-
սոր մը բան գիտնալուս :

Դեղագիրները ջուրով լեցուն շիշի մը մէջ
նետել կուտայ, ու կէս ժամ սպասելէ ետքը՝
այդ ջուրը կը խմէ . . . Իբր դեղ ու երեսը կը
թթուեցնէ . . . զգալով դեղերուն դառնու-
թիւնը :

Երեզ Ամբակում, եթէ՛ գիտնար որ ա-
սանկ պիտի ըլլար . . . հիւանդ չէր ըլլար :

Իր հիւանդութիւնն է առայժմ՝ ըստ բը-
ժշկաց զննութեան՝ Ուղեղաբջիջա-
ղաղարում, որուն դարմանն է — կ'ը-
սեն՝ իրեն այցելող բժիշկները — ուղեղը
դուրս հանել գանկէն և մաքրել, ինչու որ
ուղեղին բջիջները՝ մինչեւ բերանին . . . քօզ-
լանմիշտ եղեր են :

Սարտէլայի տուփի մը պէս պիտի բանան
Երեզ Ամբակումին գանկը, բայց յարմար
բանալի մը կը փնտռուի և ատոր համար
վարպետ դարբին մը կանչած են, համալաւ-
ւոր քաջա բացող Տիգրան աղան :

Սա պահուն չը ճանչնար անո՛նք . . . ու
րոնց պարտք ունի՝ մեր սիրեցեալ բարեկամը :

Դիշերները չառ կը զառանցէ Ամբակում :
Եւ որպէսզի մասնակից ընենք իր սիրելի
ընթերցողներն ու ունինքը այդ զառանցանք-
ներուն, փութացած ենք սղագրել իր . . .
զառանցանքները՝ որ ահաւասիկ :

Ամուսին մը, շատ անգամ խրտուիակի
(պօստան գորգուշուղը) մը դերը կը կատարէ
կնոջը . . . առ ի պատշաճութիւն, եւ զայն
ստանելով շատ մը մարդաբուհներ, կառնեն
կը քալեն. բայց բուհներն ալ կան որոնք
լօյօ չեն կլլէր եւ գալով այդ խրտուիակին
հիշեթին կը խնդան :

* * *

Կինը, շատ մը գլուխներ ունեցող վեպ
մըն է եւ այդ վեպը կարելի է որ մինչեւ
կեսը կամ պակաս ուրիշ մեկէ մը քրթա-
ուի. երանի՝ այն մարդուն՝ որ չքրթաւուած
գիրք մը կը գնէ . . . :

* * *

Աղամանը ի՞նչ է երբ հարցնեմ ինծի,
սանկ կը պատասխանեմ. աղամանը երկու
մասի կը բաժնուի մեկ մասը աղ կը պարու-
նակէ մեկ մասը պղպեղ. աղը կի՞նն է եւ
պղպեղը այրք : Կարելի է որ աղամանը իյ-
նայ եւ աղը պղպեղին խառնուի, ահա ա-
սոր կ'ըսեն ընտանեկան փոքորիկ. բայց, տե-
սած եմ հարկաւ երեք մասերով աղաման մը,
եթէ տեսած եմ, գիտեմ որ մեկ մասին մեջը
աղ, միւս մասին մեջը պղպեղ եւ երրորդ
մասին մեջ ալ մուսքաւա՛ս՝ այսինքն sauce

mountarde կա՛յ՝ որ կերակուրին համ կուտայ:
Ուրեմն, կան մառդիկ, որոնք այլ եւ կնոջ կը
խառնուին եւ... մուսթարտայի դերը կը կա-
սարեն:

Հովանոցը ձգեցե՛ք որ կնոջ նմանցենմ: Կ'անձրեւէ. մարդ մը հովանոցը գլխուն բացած է. առանց հովանոցի մարդ մը՝ որ բարեկամն է հովանոցաւորին, անոր հովանոցին տակը կ'ապաստանի: Մէկ հովանոց երկու հոգի թրջուելէ կը փրկէ. այսինքն երկու ախպարայ եւ մէկ հաւ... զրգրողին կերթան:

Ամուսնութեան ցարս-խաղը երկու հոգիով
կը խաղցուի, բա՛յց ուրիշ անձ մընալ մեկ
հով նստած կը դիտէ եւ ասեն ասեն խաղին
մէջ կիցնալ . . . ու միտս կոխի պատճառ
կ'ըլլայ:

Եւ սկսաւ խելքէ միտքէ դուրս բաներ
զառանցել եւ խիստ ծիծաղաչարժ ըլլալուն
խնդալէ մարեցայ, և այնքան սաստիկ խըն-
դացի որ Ամբակում պառկած տեղէն ընդոտտ
վեր ցատկեց եւ աչքերը բացաւ :

Սիրելի բարեկամս կարծես որ թուղթը
ձեռքս դնողդիր կը գրեմ... աչքովը չէլը
ցուցուց՝ ըսել ուղեկով թէ չի չին մէջը նե-
տեմ թուղթը:

Բայց երբ ցուցուցի՝ իրեր սղագրածներս, եւ երբ հասկցուցի իրեն թէ հրատարակութեան պիտի յանձնեմ՝ շա՛տ ուրախացաւ, ինչու որ, նոյն իսկ այդ վիճակին մէջ իր խօսքերը կերեւար :

ԱՄԲԱԿՈՒՄԻՆ ՕՐԱԳԻՐԸ

ԲՇ. — Այսօր սիրելի բարեկամս երեք
անգամ հազաց ... հազարի ջուր խմողցի
որպէսզի հազը անցնի, բայց հազը անցնելու
տեղ չունենալով ... և՛ անցաւ :

ԳՇ. — Սլրիւի բարեկամիս հաղը անցաւ
և անոր յաջորդեց փորի խիթ մը... որ զայն
բաւական մը անկողնին մէջ ցատկեցնել տու-
աւ : Իրիկունը բան մը հասկցնել ուզեց՝ բայց
չկրցի հասկնալ :

Վերջին ժամ.— Ամբակում Տէր ողորմեա
կը խնդրէ իր ընթերցողներէն :

ԱՆՄԵՌՈՒԿ

Նամը Հի տեսնած բովանդակութեամբ գերադասելով պատկերները եւ գերադասողական տպագրութեամբ մը:

UOSON



U. F. J. S. U. B.

נחלת בני ישראל

[illegible]

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ. — Անգլիայէն խուսկով մոմով և ավուճ ավուճ ոսկիներով բերուած երեք հիւանդապահուհի միսերը, մէկ տարուան մէջ աղուոր միս կապելէն վերջ իրենց պայմանաժամը լրանալուն՝ պառլնին ալ կապելով մօտ օրէն էքսքոէսով ճամբայ պիտի ելլան: (Երթաք ի բարի... Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Հիւանդապահուհիները խոստացած են ինչան երախտագիտութեան իրենց վայելած շնորհներուն և մանաւանդ 300 ոսկի վարձքին, տուգինայ մը ճանճ քըշելու քըշքըշ նուիրել յառաջիկային: (Օնատա պէրէքեաթ վէրսին, պաշտօնեաներ կան որոնք նոյնքան կը վարձատրուին և բուլլուի շիշէ մը չեն ի տար. Ծ. Խ.):

ՍԿԻԻՏԱՐ. — Թաղերու անջատման առթիւ կարգ մը ընտանիքներ, որոնք կեանքերնուն մէջը եկեղեցւոյ դուռը բեշերին վեր առնելով տամնոց մը պնակները ձգելու սովորութիւնը չունէին, կը տեսնուի որ էլ ճեպի սկսած են վերջերս: (Հա չէօյլէ եօլա կէլին. Ծ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Մեր Ատաբազարի նախորդ գործակալ Կարապետ Պուռմանեանին ականջը պուռմիշ ընելով մեր արդար պահանջը, նոյն իսկ իր ստորագրութեամբը ընդունած և հաստատած, ունկամը կամ դիկամը գանձելու համար այդ քաղաքին մէջ մէկը կը փնտռուի:


ԳԱՏԸ-ԳԻԻՂ. — Կը խնդրուի տեղացի օրիորդներէն՝ որպէս զի եկեղեցին նեղ է ըսելով դուրսի բակը ճըռճըռ պէօճէյի չի կրտրին, ամօթ է և մեղք է...

ԲԵՐԱ. — Ամբողջ երեսուն գիշեր բէմին վրայ անցնող մեր միմիք Թօլայեանին ի հանգիստ՝ (չի մեռած գործածած է այս բառը) բամբուլ անկողին մը պատրաստաս են իրեն համակիրները իր Տիւսիօէին... քալին մէջ:

ՄԱԳՐԻ-ԳԻԻՂ. — Տեղացի օրիորդ մը որ, վարժուհի ըլլալու միտք ունի, վարժուհի ըլլալով ալ վարժապետ առնելու, վարժապետ առնելով ալ՝ միտնելէն վերջ հիւսիսն ապրուելու, այս օրերս տունը թափան իչին քաշուած չալը սիւփիւրկէսիները աշակերտի պէս չարած փորձեր կը կատարէ կոր:

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

ԼՈՒԾՈՒՄ



Մեր նախորդ Մտքի Զօսանքը որ քիչ մը կնճռոտ էր արդարեւ, 32 լուծումներ միայն մեզ հասած են, որոնց մէջէն է՛ն մօտ լուծողներն են՝ Տեարք Տիրան Ռափայէլեան (Բերա) և Պետրոս Մ. Ալեանաքեան, Յակոբ Այաղեան (Իզմիր) և Յ. Սուճեան, իսկ ճիշդ լուծած է միայն Տեար Մկրտիչ Ամրիկեան (Բերայէն), որ կը հրաւիրուի այցելել խմբագրատուն՝ ստանալու համար խօստացուած դրամապանակը:

ԿԱՐԵՒՈՐ

Թերթիս անցեալ շաբթուան թիւին Շաբթուան լուրերուն բաժնին մէջ Գում-գաբուէն (Մայր եկեղեցի) տրուած տեղեկութիւններու մասին Խմբագրութիւնս կը փութայ յայտարարել թէ՛ այդ տողերը գրուած են զուտ անձնական հակառակութեան մը առթիւ, և թէ բանկալին մասին գրուածքները չար յերիւրանք ըլլալով՝ հեռի են ստուգութենէ և իրականութենէ: Ուստի անգամ մ'ընդ միշտ կը խնդրենք մեր թղթակիցներէն՝ որպէս զի անձնական հակառակութիւնները կարգադրելու համար մեր համեստ Հանդեսը գործիք չընեն այսուհետեւ:

Արսոհաւսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի թիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻՐԷՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

Կոմսուհին ապշած աղաղակեց.

— Իմ բարեկամա Տիկին Րէալը՝ կամբաստանէք:

— Տիկին Րէալ, պատասխանեց Կանիմարտ, ձեր դիպուածական բարեկամուհին է և ոչ թէ ձեր մտերիմը: Երեկունէ ի վեր է որ կը ճանչնաք: Արդ, ձեզի պիտի ցուցնեմ որ այն ամէն տեղեկութիւնները որ անոր վրայօք ինծի տուած էք՝ իր անցեալին, իր յարաբերութիւններուն, բացարձակապէս կեղծ է և թէ Տիկին Պլանշ տը Րէալ գոյութիւն չէ ունեցած ձեր հանդիպելէն առաջ և գոյութիւն չունի սա ժամուս:

— Սակայն հասցէն որ ինծի ձգած է՝ Օթէլ տը Րիվ տօր:

— Նամակ մը որ այդ հասցէին ուղարկեցի՝ ետ դարձած է ինձ՝ սա յիշատակութեամբ «հասցէտերը անծանօթ»:

Եւ Կանիմարտ աւելցուց.

— Պարզ հարցում մը տիկին, իր մեկնուածն ի վեր Տիկին Րէալին գրեցի՞ք:

— Ո՛չ, իրմէ է որ նամակի պիտի սպասէի:

— Կը վախնամ որ միշտ պիտի սպասէք. ուրիշ հարցում մը, կը ճանչնայի՞ք Տիկին Րէալը կապոյտ աղամանդին աճուրդի պահուն:

— Այո՛:

— Նէ ներկայ դտնուեցա՞ւ այդ աճուրդին:

— Այո՛, բայց միասին չէինք:

— Ձեզի յայտարարեց որ մատանին գնէք: Կոմսուհին յիշողութիւնը ամփոփեց:

— Այո՛ ... արդարեւ ... կը կարծեմ որ նոյն իսկ ինքն էր որ առաջին անգամ ինծի խօսեցաւ:

Վայրկեան մը լռութիւն տիրեց, յետոյ Պ. Տիւտուի անդրադառնալով.

— Եւ ետքը՝

— Ետքը՝, յարեց Կանիմարտ:

— Այո՛ ետքը...: Այս պատմութիւնը շատ հետաքրքրական է: Եթէ Տիկին Րէալ

մատնին առած ըլլար՝ ինչո՞ւ Պ. Պլէյշէնի պայտասակի շիշին մէջէն գտան, երբ մէկը կապոյտ աղամանդը գողնայ՝ կը պահէ՞ զայն, ի՞նչ ունիք պատասխանելու ասոր:

Կանիմարտ լռեց, Պ. Տիւտուի շարունակեց:

— Նայինք Կանիմարտ, ստոյգ է որ այս առարկութիւնը ձեզ մտահարեց, բայց ես որ ձեզի պէտք եղածին պէս կը ճանչնամ, այս տեսակցութիւնը սկսելնուս ի վեր, անանկ կը տեսնեմ կորոր՝ մեզմէ բան կը պահես, յայտնի եղի՛ր, ի՞նչ է ձեր վերջին կարծիքը:

Կանիմարտ շփոթած ոտքի ելաւ, սենեակին մէջ աջ և ձախ չափիփեց, յետոյ, Պ. Տիւտուիի առաջը կենալով՝ ըսաւ.

— Իրաւ, պե՛տ, բան մը կայ, եթէ կը վարանիմ, այն է թէ՛ զիս կը ծաղրեն միշտ, կըսեն թէ՛ Արսէն Լիւբէնը կը տեսնեմ ամէն բանի մէջ և ամէն բանի խորը, ա՛ն Աստուած գիտէ որ այս անգամ, աս կենդանին միտքէս հեռու էր:

— Ինչպէ՞ս գուցեց Պ. Տիւտուի, Արսէն Լիւբէնն է որ կապոյտ աղամանդը կը գողնայ:

— Այդ չեմ ըսեր, այդ չէ, կակաղեց Կանիմարտ շփոթած, ո՛չ ո՛չ, իրապէս Լիւբէնը չէ:

— Հապա ո՞վ:

— Խարտեաչ կինը:

— Խարտեաչ կինը՞:

— Այո՛ պետ, գուցեց Կանիմարտ, Արսէն Լիւբէնի ընկերուհին, խարտեաչ կինը, որ Օր. Ժէռպուան կը վերցնէ և կը տանի 25 թիւ Քլաբէյրօն փողոց և կ'անյայտանայ Արսէն Լիւբէնի հետ, խարտեաչ կինը՝ որ Անթուանէթ Պրէհաթ անունին տակ, կսպանէ զօրապետ Պարոն տ'Օթուան, խարտեաչ կինը վերջապէս, որ Տիկին Րէալ անունին տակ կը շորթէ կապոյտ աղամանդով մատանին:

— Ապացոյցնե՛ր, ապացոյցնե՛ր, պահանջեց Պ. Տիւտուի:

— Մինակ հատ մը ունիմ, պատասխանեց Կանիմարտ՝ դրամապանակէն թուղթ մը դուրս հանելով՝ որ բացաւ, ահաւասիկ ասոնք մազերն են Անթուանէթ Պրէհաթի, փրցուած պարոնէն և գտնուած անոր մահուան ատեն: Պօրտօէն կուգամ հիմա, ուր կը բնակի Պ. Ժէնպուաի աղջիկը, նէ ճանչցաւ խարտեաշ կնոջ մազերուն գոյնը:

Կոմսուհին խնդաց,

— Ներեցէք սիրելի Պարոն Կանիմարտ, բայց չիտակը շատ ծիծաղելի է, իմ բարեկամուհիս Տիկին Րէալ թխագոյն է:

Քննիչը չչփոթեցաւ՝ այլ պատասխանեց.

— Պարոն ա'Օթուաի սպանումէն ետքը, այն ատեն երբ իրեն դէմ դէնք մը ունէին, խնդ պիտի ըլլար որ իր մազերը այդ գոյնը պահէր, պարզապէս փոխեց: Շաբաթ մը ետքը Տիկին, յարաբերութեան կը մտնէիք Տիկին Րէալի հետ, որուն մազերը թուխ էին և որ ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ խարտեաշ կինը:

— Ապացոյց, ըսաւ Կոմսուհին:

— Տիկին Րէալ անխոհեմութիւնը ունեցեր էր — Արսէն Լիւբէնի աշակերտները չեն կրնար իրենց վարպետին հաւաստիւ — դըղեակին մէջ ձգելու չիշ մը, որ իրաւ թէ պարապ՝ բայց դեռ բարկ հոտով մը, որ կարենայ որոշել Օր. Ժէնպուա այն անուշահոտութիւնը՝ որով կը քսուէր խարտեաշ կինը՝ իրեն հետ ճամբորդութեան ընկերացած ատեն:

Այս անգամ կոմսուհին պարտուած երեւաց, ամուսինը ձայն չէր հանէր, ապահովութեան պետը վայրկեան մը ինքնիրենը խորհրդածելէ ետքը՝ խօսք առաւ.

— Այս ամէնքին մէջ, բաւական տարօրինակ պարագաներ կան կը խոստովանիմ, բայց համարելով որ ձեր ենթադրութիւնները ուղիղ ըլլան, Կանիմարտ, գաղտնիքը ալ աւելի անուծելի կը դառնայ, առաջին խարտեաշ կինը ինչո՞ւ համար կապանէ Պարոն ա'Օթուաի և չգողնար կապոյտ աղամանդով մատանին, որ իրեն շատ դիւրին էր վերցընելը, երկրորդ, նէ յաջողեցաւ ամէնէն դժուար պարագաներու տակ Տիկին Կրօզօնի ֆատանին գողնալ և յիշեալ մատանին Աւստրիացի հիւպատոսին շիշին մէջ դնել, ինչպէ՞ս կը մեկնէք ասոնք:

— Չեմ մեկնեմ պե՛տ, չեմ կրնար մեկնել

այն եղանակը՝ որով կապոյտ աղամանդը շորթուեցաւ կոմսուհին և մտցուեցաւ Պ. Պլէյ-չէնի շիշին մէջ, ճշդիւ, որովհետեւ մեկնութիւն չեմ գտնէր, երբ կը կարծեմ Արսէն Լիւբէնի ներկայութեանը ըլլալ:

Պ. Տիւտուի անհամբերութեան չարժուած մը զսպեց, մինակ Լիւբէնի անունը զինքը կը սրտնեղէր:

Քիչ մը ետքը խօսակցութիւնը վերջացաւ: Տէր և Տիկին Կրօզօն, ընկերացած քննիչին՝ սանդուխներէն իջան և բակէն անցան: Այն պահուն՝ երբ ինքնաշարժ կառքին մէջ կը մտնէին, կոմսուհին, որ մտահոգ կերեւէր, դարձաւ դէպի ոտոթկանը և անոր ըսաւ.

— Պ. Կանիմարտ, քեզի հաճելի պիտի ըլլայ եթէ Հէրլօք Շօլմսի միջամտութիւնը խնդրեմ:

Կանիմարտ քիչ մը չփոթեցաւ:

— Բայց ոչ ... մինակ ... լաւ չեմ հասկընար ...:

— Ահա այն ամէն գաղտնիքները ինծի սրտնեղութիւն կը պատճառեն, կուգեմ լրացած տեսնել, այն ատեն մտածեցի զիմիւր անուանի Հէրլօք Շօլմսի:

— Իրաւունք ունիք Տիկին, ըսաւ քննիչը, ծերուկ Կանիմարտը ուժ չունի կուռելու Արսէն Լիւբէնի դէմ, Հէրլօք Շօլմս պիտի յաջողի, կը մազթեմ, ինչու որ իրեն հանդէպ մեծ հիացում մը ունիմ, սակայն, սակայն ամէն պարագային վստահ եղիք Տիկին որ իմ գործակցութիւնս իրեն՝ ապահովուած է:

— Գիտէ՞ք իր հասցէն:

— Այո՛, Բարք Սթրայթ 219:

Նոյն իրիկունը իսկ, Կրօզօնի կոմսը ու կոմսուհին, թէ առին Պ. Պլէյչէնի վրայէն ամբաստանութիւնը և թէ գրեյին Հէրլօք Շօլմսի:

(Շարունակելի)

Յաջորդ թիւերով՝ այս կապոյտ աղամանդի գործին պիտի խառնուի Անդլիացի համբաւաւոր վիպագիր Գօնան Տուլի գլուխ գործողին հերոսը՝ լրաեւ Շէրլօք Հօլմս, որ բաւական պիտի մաքառի Արսէն Լիւբէնի հետ:

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՂ

ԼԱՆՈՅՐԱՆՈՅՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թոփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գինով յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց թելքովներու
եւ տղայոց շիք եւ գինացիուն փոքրու-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—8



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Զինասանէ, Հնդկասանէ, Ճալաէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն գոհարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒՄԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասանման	»	12 ֆր.	» 6 ֆր.

Կ Ա Ղ Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՋԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հաստի Աստուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան եւ
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտարութով եւ կամ բոսթայի փութով 20 հաւա-
20 զրուի հաշուով:

Ա Պ Ա Ռ Ի Կ

Օ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՑ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊՍՈՒԿ
ԷՅՕՕՈՒ ԱՒԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիկի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, ևայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարապարզ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջագդեմտի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) ևայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հլւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ելն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ շահած է հանրութեան վստահութիւնը, զնահատուած է նաեւ իր ապրանաց տոկոսնութիւնը, նրբութիւնը և աժառնութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐԾԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—47

Փ Ա Լ Ա Գ Ա Շ Ե Ա Ն
ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈՒԹԻՒԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ
Կ. Պոլիս, Գասը-գիւղ, Մէօհիւրսար
հաստէսի.

Յրդ Տարեցումն

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոհմային ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօս-

տելավարժութեամբ (բռաքիֆ), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զուլթակ: Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջ և պահիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար դիմել ի վարժարան առ Տեսուչն կամ առ Տեսչուհին: Մասնաւորապէս տեղիկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Շր. օրերը ժամը 5 էն 9 զիմուով ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նոր խան, վերի յարկ, Թիւ 55:

Աշակերտուհեաց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-Տնօրէն

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ.